

ԲԱԺԱՆՈՒ ԳՐԱՐԱՆՈՒԹՅՈՒՆ

Պուշկարիոյ համար	12 ֆր.
Վեցամսեայ	6 ֆր.
Առաստաղակալի համար	15 ֆր.
Վեցամսեայ	8 ֆր.
Անհիպոյի համար	3 ֆր.
Վեցամսեայ	1.50 ֆր.
ԿԱՆՆՈՒԹՅԱՆ ՎՃԱՐՆԵԼԻ	

Իրանուցեան տղայ տա-
րին երեսին համար 40 ֆր.
հսկ վերջին երեսին հա-
մար 20 ֆր. հսկ հ. երեսին
սակի սկզբունքով համար
20 ֆր. զեղջ կրչայ:

Վառնայի համար ձեռք 10 սանթիմ.

ՇԱՐՄԱՆ

ՆՈՐԻՔՇԱՐԹԻ ԵՒ ԳՐԱԿԱՆ

ԿՐ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅԱՆ ՉՈՐԻՔՇԱՐԹԻ ԵՒ ՀԱՐԱԹ ՕՐԵՐԸ

Redaction du journal

Владимир на ВЪСТНИКЪ
- Шаржумъ.
Рарва
Redaction du journal
«Charjourn»
Varna (Bulgarie);

Արաստաղակալի ձեռք

Արաստաղակալի ձեռք

(20 ՍԱՆԹԻՄ)

Պուշկարիոյ համար ձեռք

15 ՍԱՆԹԻՄ

ԱՋԱՏԱԿԱՆ ԹՈՒՐՔԵՐԻՆ

(ՊԻԼՈՒ ՔԻՄԱՐԻ ՅՕՒՒԱԾՐ ԱՅՍ ՏԱՐԱՅ ԹԻՆ 8 ՊՐՕ ԱՐՈՒՆԻԱԻ ՄԷՋ)

Արդէն մի ամիս է որ համաժողովը վերջացաւ. ապագայ գործունէութիւնը պատրաստելու եւ վարելու համար կոմիտէ կազմակերպվեց:

Մենք չը գիտենք թէ ինչ որոշումներ պէտք է տրուեն. եւ անկասկած այդ որոշումները գաղտնի կը մնան. իսկապէս պէտքն էլ չը կայ հակա-ասիորդին իմացնելու այն միջոցները, որոնց նպատակն է նրան վտանգաւոր լինելու վիճակից դուրս կացնել:

Բայց որչափ որ պէտք չէ գործունէութեան ձեւերը եւ պայմանները հրապարակել, նոյնչափ էլ անհերքելի է երկու կէտերի մասին լռելը՝ գործելու օտարողականութեան եւ բնաւորութեան մասին:

Հայերը, որոնք կայսրութեան բոլոր ցեղերից ամենատառապողն են, չպատահին նորոգ խորհրդածութիւններին. նրանք յայտարարեցին որ անխնայ կոխը պէտք է շարունակեն ներկայ ընթացի գէտ, լինի առանձին, լինի ռեզիւցիոն հետ միասին. եւ հայերի գործերը, ինչպէս եղած է անցեալում, համաձայն կը լինին իրենց խօսքերին:

Այժմ Սուլթանը Համիտի մահմետական հպատակները ամեն օր գոճ են նրա արեւոտ խենթութեան. անյայտ է այն երիտասարդների թիւը, որոնց մահուան պատճառով պատժեցին զինուորական վարժարանի նըկուզներում, որոնք նաւային նկուզները նետով ռոմ արքայիցիները Տրիպոլիս կամ Եմէն:

Անձանօթ են եւ նրանց անունները, որոնց Այ-Հասան փաշան Պէշկի-թաշում, նոյն իսկ Երլտաի մէջ, հէնց իւր տիրոջ առջեւ շարժեց:

Քանի ամիս է որ ոստիկանական տէրօրը հեռագրեալ գորեղանում է. եւ հակառակ բոլոր հնարովի միջոցների, որոնցով ուզում են լռութիւն պահել, այդ հարուստ իւրեանցի անյայտ մնալը անկարելի է լինում, որովհետեւ Համիտի հալածանքին ենթարկվողները շատ կարեւոր մարդիկ են:

Ամենից առաջ Սուլթանը գրգռեց Օսման փաշա Պէտրիսանին աւազ խոստումը. վերջինս նաւից դուրս գալուն պէս իսկոյն Պոլսում ձերբակալվեց եւ մահուան դատաւարույց. թե-րեւ սկայսերական ողորմածութիւնը այդ վճիռը մշտական բանտարկութեան փոխէ. բայց եթէ Օսման փա-

շան օրը ցերեկովը չը կախվեց. կը թունաւորեն իր զնգանում:

Յետոյ Յուսուֆ փաշան, որին հաւանորէն խառնել են նրա Եգիպտոսում գտնուած բարեկամների հնարովի դաւադրական գործերի մէջ, ուղարկվեց Գամսուկոս եւ բանտարկվեց իրը հանրային իրաւունքի գէտ մեղանշող:

Վերջապէս վերջին օրերս եկած հեռագիրները յայտարարում են որ Գարթալից նաւով գիւրեր սպաներ են եկել Եւ Շաքիր փաշային ձերբակալել են իր Պրինկոպի տան մէջ. որչափ Սուլթանը շտապել է այդ ոճրագործին ձերբակալել:

Նոյն օրը Հալիթի վարժարանում ձերբակալվել են 40 ուսանողներ, նոյնպէս և ուրիշ բարձրաստիճան անձեր. և այսպէս, վեհապետի կատարած կատաղութիւնը ուղղուած է նրանց դէմ, որոնք հեռուցվել և մտակից շփում են ունեցել բարձր պաշտօնների հետ, նաղիմ փաշան, հանգուցեալ մեծ վեզիր Ալի փաշայի փեսան, Շաքիր փաշայի բախտին է արժանացել, որը հանգուցեալ մեծ վեզիր Զէվադ փաշայի ազգականն է:

Այսպէս, Համիտը իր վերջին աւանդակութիւններով յանձն է առել իր ամեն մի հպատակին ցոյց տալ որ դրանք, իրենց անձնական ապահովութեան համար, պարտաւոր են նրան վերջացնել:

Մի քանի շատ խոնարհամտներ կամ շատ բարեկիրթներ կարող էին կարծել թէ կայսրութեան ընդհանուր կործանումի մէջ իրենք կարողանալու են անզգայորէն և գոնութեան մէջ ապրել. բայց նրանք խարժում էին. տիրոջ ատելութիւնը ոչ ոքին չէ մոռանում. ոչ Ստամբուլի բանջարապաններին, ոչ կայսերական տան անդամներին, ոչ պատերազմիկ հերոսներին եւ ոչ էլ երեկվան սիրելիներին:

Ոչ Իզէտ բէյը, ոչ Էրուլ-Հուղան, ոչ Սէլիմ փաշա Մեհմէտէն, որի Բերայի տան մէջ լինելիք պարահանդէսը արգելվեց, եւ ոչ էլ նրանք որոնք Սուլթանի ոճիրներին մասնակից են վաղվան համար ապահով չեն: Ամենատարակարգ վատութիւնը անգամ այլ եւս փրկութիւն չէ երաշխաւորում. Ամենքն էլ զոգուած են եւ պատրաստ են դաւել ինքնապաշտպանութեան բնազդովից զրգգած:

Ես չեմ խոսում եւ այն օսմանցիների դատի մասին, որոնց համար հաճելի չէ իրենց երկրի անբուժելի անկումը: Սրանք ուզում են խուսափել նոր անդամահատութիւնից. սրանք գիտեն որ Ալեքանդր եւ Մա-

կեդոնեան ոտքի են կանգնում. գիտեն որ արարների շէքերը կատաղի կոխ են մղում վերափոխելու այն երկիրները, որոնք միայն անուանապէս թուրքերային են պատկանում. գիտեն որ հայկական նահանգները շուտով մտակոչիները երկիրը պէտք է գտնայ, եթէ Համիտի թագաւորութեանը մի կարճ պայմանաժամ չը չը դրվի:

Այդպիսիները իրենց կեանքը պահ պահելուց աւելին են անում. դրանք ուզում են իրենց հայրենիքը փրկել. ուրիշ վաղը չէ որ պէտք է գործեն, այլ հէնց այսօր:

Քաղով որանց գործունէութեան բնաւորութեանը, այդ անխուսափելիորէն որոշված է հէնց այն ընթացքով, որը իրենց խորտակել է:

Մի վեհապետի դէմ, որը կտտաւարում է կոտորածով և տէրօրով, խաղաղ պահանջումներով յաղթանակել երեւակայելը երկխոսութիւն կը լինէր: Հայ կոմիտէները ազատական թուրքերին միակ ճամբան ցոյց տւին, եւ այդ ճամբով պէտք է գնան թուրքերը. եթէ չեն ուզում իրենց եւանդը դատարկ խօսքերի մէջ վատնել:

Այդ մի դժբաղակ եւ ողբերգական ճանապարհ է. եւ ով նրա մէջ է մտնում, մահուան սուերում է քայլում. Բայց նրա գիւրը ազատութիւն է, նման երկրի արքայութեան. ինչպէս անտարանն է ստույգ. նա վարանտներին և թայրերի համար չէ պահված, այլ ուժեղների եւ ամենիների համար, որոնք նրան փափաղում են իրենց ամբողջ հողովը:

Վերջանալի Բազիմի իլլումնը:

ՄԻԱԼ ՄԻՋՈՑ

Ընթերցողները գիտեն որ Ամերիկայի մէջ ինքնապաշտպանութեան մի յանձնախումբ է կազմվել և դրամ է հանգանակում ուղղակի կուր վայրում, զէնքը ձեռքերին Սուլթանի դէմ մաքառողներին ցրական օգնութիւն հասցնելու համար:

Այդ յանձնախումբի դէմ հալածանք են սկսել վերակազմեալ Հնչակեանները. նրանցից մէկը, Մարգուկեան, երբեմնի բողոքական քարոզիչ, այժմ հայ վարդապետ, նոյն իսկ յանդգնել է ձեռնով սպառնալ իր պաշտօնակից Մաշտոց վարդապետին:

Վեց տարի է որ արտասահմանում գտնված հայերը իրար շար-գում, իրար մտաւում, իրար հալածում են. Երբ միակ պատճառը մեր ազատագրութեան գործն է. նրա անուշով կուրում և մաքառում է թէ իսկապէս գործը սիրող և նրան ծառայել ուղղ հայր, թէ խաբեբայ դատարկա-չը շիկը՝ գիտակաւոր յեղափոխականը, անսիրտ, անհոգի, անխիղճ և անպէտք կղերականների մեծամասնութիւնը:

Հիմա Ամերիկայի կուրների գլխուոր պատճառը Մէկ միութեան խնդիրն է, մէկ էլ այդ յանձնաժողովի գոյութիւնը: Վերակազմեալները կտտաւել են, որովհետեւ համազում են գոյացրել թէ յանձնաժողովը իր հանգանակած գրամները Դաշնակցութեան միջոցով պէտք է ուղարկել իր նպատակատեղը. ու այդ կատաղութիւնն է որ վերակազմեալներին ստիպում է ամենաանհեթեթեալ քայլեր անել, և իրենց կազմակերպութեան վարկը գոյել, եթէ նա իսկապէս մի աչքի ընկնող վարկ ունեցել է իր ծնած օրից:

Մեզ համար հաստատելի կը լինէր եթէ Ամերիկայի վերակազմեալներն էլ իրենց համակարգ շէքերիցից այդպիսի մի յանձնաժողով կազմէին և բարի նախանձով տողորմած յառաջ մղել տային յեղափոխութեան գործը իրենց խաւերի մէջ: Բայց չէ. վերակազմեալները ոչ չեն անում, այլ ձգտում են եղածը քանդել. որովհետեւ նրանց կարծիքով մասնակի շարժումներ պէտք չեն. հանգանակութիւններ պէտք չեն. դրամ պէտք չէ, երկրում կուրողներին շօնել պէտք չէ:

Հապա ի՞նչ է պէտք, պարոն Ամերիկայի վերակազմեալ յեղափոխականներ: Ամթթ է օ ամաչեցէք. յեղափոխական անուն էք կրում. իսկ այդ անունը կրողը ամեն մի այդ նպատակին ծառայող գործ պէտք է քաշայերէ. թէ կուր ինքը մասնակցելիս չը լինի այդ գործին: Օրինակ ա-

աէք ձեր ան պատգամաւորներէն որոնք ներկայ էին ազատական թուրքերի համաժողովին. նրանք յայտարարեցին. — չը նայելով որ հայ յեղափոխականները իրանց գործը առանձնապէս պէտք է շարունակեն, բայց և այնպէս միշտ պատրաստ են աջակցել թրքական այն գործունէութեան. որը նոյն նպատակին է ծառայում. Արգեօք ձեր ծրագիրը թուրքերու է նոյն նպատակին ծառայող թուրքերի գործերը քաջալերել, իսկ ձեր ազգակից տարրեր կուսակցութիւններինը ո՞չ:

Անկարելի է սրայդպէս լինի մի հայ յեղափոխական կազմակերպութիւն այդպիսի հրէշային ծրագիր չի կարող ունենալ: Գոյց գուք զիրար որովհէտ որ Գանձակցութիւնը չէ շտապում ձեզ հետ միանալ, և այդ միջոցներով էք ուղում ազգել նրա վրայ: Սխալ ճանապարհ էք ընտրել լայն կամներ. ձեր գործը դրամ միջոցները աւելի կը հեռացնեն. Այդ միջոցներով գուք նախ ապացուցանում էք որ հայ յեղափոխութիւնը ոչ սիրում էք և ոչ էլ ըմբռնում էք նրա նշանակութիւնը: Այդ միջոցներով գուք յայտարարում էք թէ — քանի որ մենք անկարող ենք յեղափոխութեան ծառայել, որ ինչն էլ թող չը ծառայեն:

ՎԱՐԴՕ

ՊԵՏՈՒ ԵՒ ԻՐ ԸՆԿԵՐՆԵՐՈՒ ՅԻՇԱՏԱԿԻՆ

Գահճը՝ մեր պատելի բնկերները, գաղափարի առ մաքուր և վեհ արտայայտիչները, իր անարգ կախազանին վրայ բարձրացուց, Հայը պատժելու, Հայը ընկճելու և վախճանելու համար:

«ԳԱՂԱՓԱՐԸ ՉԻ ԿԱՆՈՒՄ» գոռաց խրոխտարար անվեհեր հերոսը և թքու Մեծ Մարգարային ազատա երեսին, ապացուցանելով որ կախազանները Հայը ոչ թէ կնկճեն, այլ նորեր կը ծնկնեն:

Նախատակ ընկերներուն պատճառած սուղը, խոստովելով վրէժխնդրութեան գոռ ազգակներու հետ, բարձրացու ընտր հայ անկեղծ սրբտերէն:

ճաւը կսկիծը ընդհանուր է... Չորս կողմէն գաղափարի առ քաջարի հերոսներուն յիշատակը յարգելու համար հոգեհանգիստներ կատարուեցան:

Յիշուէի հայութիւնը, որ իր մէջէն Պետի, Օնիկներու, Թաթուրներու, Անտոններու պէս գաղափարական անձնուէր հերոսներ տուաւ, Յիշուէի երխտասարգութիւնը՝ որ միշտ անոնց հետ ապրած, անոնք սիրած, յարգած է, ի հարկէ կսկիծի ա՛լ աւելի յայն րաժիւն մը ունեցաւ. ու կը պարտատու էր իր երտասագիտութիւնը, յարգանքի պարտականութիւնը աւելի ուժեղ թափով մը այտայտելու:

Ո՞վ կրնար երեւակայել որ, Նախատակներու գերեզմանին առջև

յիւս, Պետոներ ծնող ազգէն պիտի իննն յանկարծ դահճը գերազանցող հայ-թրքեր, ու վատութեան ամենէն ահուկին պիտի գործեն մութին մէջէն, գեանին տակէն, անշուշտ երախտագիտական մե՛ծ... պարտք մը կատարելու համար Մեծ-Մարգարային:

Մատնեցին հոգեհանգիստը... Ճարակոյս շիկայ, որ միշտ պէտէ հայութեան հետ բովանդակ հայ գաղութներուն մաքուր սարքը փակցուց անոնց երեսին ՎԱՍԸ, ԳԱՂԱՓԱՐԸ մակդիրները:

Յարգանքի պարտքը՝ զոր կը պայտէր ընել Յիշուէի երխտասարգութիւնը՝ անկարելի էր որ մոռնար: Մատնութեան ու վատութեան այդ քստակի արարքէն ետքը, սրբապղծութիւն մըն էր սակայն հերոսներու անարատ և պատկառելի աշուշտ ալ այն մարդոց բերանը, առօրէի կատարել տուլ այն մարդոց բերանով՝ որոնք... «Մատնել» գիտեն:

Անհամբեր կապտուէր օրումը մը վարդանանց օտնին:

Հառաւ առ օրը: Ան անգամ Պետոս անունին նուիրուած Յիշուէի երխտասարգներու նորակազմ «Պետոս Պուկարացի» խումբին է որ փախուքիցաւ նախաձեռնարկ ըլլաւ:

Եւ վարդանանց զիւրք տեղի ունեցաւ բաւական չքեղ սգահանդէս մը «Ձար Սիմէոն» սրահին մէջ՝ պղտկ մոտաքով մը, զուտ հասոյթը Պետոսի գրուածքներուն ու թարգմանութիւններուն հաւաքածոյին հրատարակութեան յատկացուելու համար: Խուռն բազմութիւն մը փութացած

էր իր յարգանքը յայտնել հերոսներու յիշատակին: Հայ երգը եղաւ մեր սղոթքը, սգահանդէսը՝ մեր հոգեհանգիստը:

Սրահը օրումն հանդէսին պատշաճ ձեւովը զարդարուած էր: Բեմին ուղղակի ճակատը կախուած էր երգեցիկ-թատերական երկուստ խումբին նուիրած պատկը, որ քնար մը կը ներկայացնէր, որուն մէջ Յ. Պետոս Նախուէի համազգեստով: Պատկերին երկու կողմը կախուած էր «Պետոս Պուկարացի» խումբին նուիրած պատկը որ Վոյ գիր մըն էր ծաղիկներով շրջանակուած Պատկերին քով գրուած էր նաեւ «Արամեան» խումբին և «Շաքէ» նուիրած պատկերներ: Բեմին ալ կողմը գետեղուած էր Թաթուր, Օնիկի, Մերձուղի, Սօքոյովի և Եօրիկի լուսանկարները, որոնց քով գրուած էր ԱՅԻՇԱՅ և «Արեւելեան» խումբերու նուիրած պատկերներ: Սրահին աջ ու ձախ պատերուն վրայ գրուած էր նաեւ Պետոսի մեծ պատկերը քաղաքային տարազով և Սիւրբ Աղբիւրի մեծ պատկերը:

Երգեցիկ թատերական խումբը հանդէսը բացաւ «Արք Հայկազունքով» և յայտագրին համաձայն երգեց նաև «Հայ եղբայրներ», «Լոսն սուկար», «Նա լոսնցի մի անուշ ձայն»: Օրնուարդ Չէքոսիւնի արտասանեց «Շարժում» մէջ հրատարակուած կնքով «Ձեզ չը հասկանա՞ր»: Օրնուարդ Ամատունի երգեց զարի իմ սո

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ԱՆՀԱՍՎԱՆԱԼԻՆ

ՄԱՍ III ԳԼՈՒԽ Գ.

Վահէն իր խորհրդածութիւններին մէջ էր, և բը նրան մտեցաւ Արշակը և կամացուկ թեւին խփելով՝ ստեց:

— Վահէ, ինչ որ ձայն եմ լսում, կործես թէ ձերի ոտքի ձայն լինի. արքէն բարձրովն լուսանում է. վեր կաց:

Վահէն իսկոյն տեղիցը վեր թռաւ. և անհնջը Արշակի ցոյց տուած կողմը դարձնելով, իսկապէս ինքն էլ ձերի ոտքի ձայն լսեց, ու ստաց:

— Այո, ձիւտներ ևն գալիս, բայց շատ չեն երևում. չուտով, բայց կամաց տղերանցը զարթեցրու, տեսնենք ինչ պէտք է լինի:

Արշակը սկսեց զինակիրներին զարթեցնել իսկ Վահէն բարձրացաւ քարի գլուխը ու հրացանը պարտաստի բռնած՝ սկսեց հեռադիտակով դիտել ձայնի եկած կողմը:

Բաւական հեռուից երեւցան ևրեք ձիւտներ. երեքն էլ քրդեր. որոնք գալիս էին սղայոց գտնված տեղի ուղղութեամբ:

Վահէն իսկոյն քարից վար իջաւ և սղայոց մօտ գնալով, ստեց:

— Տղերք, երեք ձիւտեր քորդեր են գալիս. բաւական չեն նրանք պարզ ճամբորդներ են, և մեր գոյութեան մասին տեղեկութիւն չունին:

Բայց երբ մեզ նկատեն խնդրը պէտք է փոխվի. եթէ կուր էլ չը

բռնվեն, անշուշտ կերթան հաւար տալու: Աւելին մենք ուզած չուզած պարտաւորված ենք դրանց հետ գործ ու վերջացնել: Միայն կամաց պէտք է կատարվի՝ սմեն գործողութիւն. եթէ կարելի է նոյն իսկ դաշտայններով գործը վերջացնելու է:

Աւելին լուռ ու մուշկ սպասեց. գան թէ չէ ստորձանակները պատրաստած թռչինք ձիւտի ստալ և հըրամայենք անխում իջնել: Անձնատուր լինելուց յետոյ այնուհետեւ գործը զրուին է:

Այս բացատրութիւնները տալուց յետոյ Վահէն ընկերներին մտասրի բաժնեց և տեղաւորեց այնպէս որ քորդերը շարս կողմից կրակի մէջ մնան և փախչել չը կարողանան:

Մի քանի րոպէից յետոյ ձիւտները երեւցան—նախքը—յարմար տեղերում պտակած դիրքեր էին գրաւել և ուշի ուշով դիտում էին. Հէնց որ քրդերը մտակցան տուջին դիրքին, Վահէն ուրիշ երեք ընկերներին հետ արագութեամբ նրանց ետեւը անցաւ ու բղաւեցին:

— Կանգնեցէք: Քրդերի ձիւտը խրտնեցին և դէպի ձայն թեքվեցին. այն տեղից երեք մարդ առաջներ կտրեցին:

Քրդերը կատաղեցին և ձեռքերը սրերին տարան, բայց երբ ամեն կողմից պարտաստի ատրճանակները տեսան, իսկոյն ձիւտը կանգնեցին և յայտարարեցին:

— Շատ լաւ. դուք շատեր էք. մենք կուրել չենք կարող ձեզ հետ. ինչ էք ուզում մեզանից:

Վահէն ուղեցոյցի միջոցաւ պատասխանեց. — Ոչինչ. մենք ուզում ենք որ

դուք մեզ անձնատուր լինէք. մենք հայեր ենք, ֆէտայինք. ձեզ չենք սպանի, մի վախեցէք. ձեր գէնքերը և ձեր ձիւտը կառնենք. մեզ հետ, ձեր ձեռքերը կսպամ, մի որչ տեղը կը տանենք ձեզ միջեւ պարտական սահմանադրութիւն. այն տեղից ողջ առողջ բաց կը թողնենք:

Քրդերից մին—մի հսկայ և կարիճ աղամարդ պատասխանեց.

— Վայ, դուք հայեր էք հա՞. ևս իմ կեանքիս մէջ այնքան հայք գուրս եմ կերել. հայը իմ մօտ ճանճի նշանակութիւն անգամ չէ ունեցել. հիմա հային անձնատուր լինի՞մ. չէ, այդ չի կարող լինել: Ու այդ ստեղծ ձեռքը տարաւ գոտուց ատրճանակը քաշելու:

Ինչ որ խօսքերը չէին վերջացել կը քորդը մէջքից մի գնդակ կրաւ. գնդակը անհամբեր Արշակի ատրճանակից էր:

Քորդը ձիւտը ընկաւ. միւս երկուսը անձնատուր եղան:

Վահէն հրամայեց զինաթափ անել թէ ընկած քորդին և թէ ողջ մնացածներին:

զինակիրները իրենց ունեցած ծանրութիւնները իսկոյն ձիւտի վրայ դրին քորդերի ձեռքերն ու ոտքերը կապելով իսկոյն ճամբայ ընկան աւելի ձորի խորը մտնելով—որպէսզի ամբողջ յերեկը թաքնվելուց յետոյ՝ գիշերը իրենց ճանապարհը շարունակեն:

Խուճար արագարար իր երկու դերիներով ձորն էր իջնում: Մի քանի հողի ուղղակի ձիւտի ետեւից էին գընում նրանց ոտքի տեղերը ջնջելու ձիւտը թափելով: Գերի քորդերը զարմացած դիտելով այդ գործողութիւնը ուղեցոյցին ասացին:

— Ձեր զխաւորը իսկապէս լիւրան աւազակ է երևում. տես ինչ գրոյ է. ձիւտի ոտքի տեղերն անգամ ոչնչացնում է:

Մենք չէինք կարող երեւակայել որ հայերի մէջ ձեզ նման մարդիկ կը գտնվեն: Առաջ չը կոչին այդ տեսակ մարդիկ, հիմա մի տեղից դուրս եկան:

— Ինչ շատ պիտի դուրս գան, կարճ կերպով պատասխանեց ուրիշցոյցը. առաջ դուք ու թուրքերն էիք մեզ հալածում և սպանում. հիմա էլ մեր հերթն է եկել:

Իսկ Վահէն Արշակին յանդիմանելով, ասում էր.

— Ինչո՞ւ կրակ տուիր. ևս քեզ չէի տուել որ պէտք է աշխատանք լուր կերպով գործը վերջացնել:

— Է՛հ, ինչ անեմ, չը տեսար հայերի մտին ինչ անարգանքով խօսեց: Ո՞նց դիմանայի, դու ասա:

— Եթէ դիմանայիր, մենք այսքան ծուռ ու մուռ ճամբա չէինք բռնիլ. մեր տեղում կը մնայիր միջնակ երեկոյ:

— Վնաս չունի, այս անգամ ներքի միւս անգամ աւելի խոհեմ կը լինեմ, պատասխանեց Արշակը: Հրացան ունենայ, քորդը ձեռքը ընկնի, պարծենայ որ շատ հայք գուրս է կերել, ու մարդ դիմաձայն—մի քիչ զեւարբան է:

Այդ անհրաժեշտ շատ լուրջ ու շատ պաղարիւն պէտք է լինել...

(Շարունակելի)

խակը: Տիկ. Ի. Մազմանեան երգեց
«Չայն տուր ո՞վ ծովակը» եւ Մայր
Արաքսի: Տիկ. Բ. Թամիրեանց
դաշնակի վրայ, Պ. Բարով եւ Պ. Սո-
թիքով: Քլիթ. թով նուագեցին մէջ մէկ
գծուար կորները շատ յաջող, Պ. Օ-
բլանկոյի արտասանութիւնը մը բարե-
— Բերուշիցայի կտիւր, Պ. Փավէլ
Կենտրոնէլ յուզ' զբանաստեղծութիւնը մը
բարե: Պ. Լեւոն Մինասեան հայերէն
բանաստեղծութիւնը մը բարե: Վեր հա-
նեց յեզակոթութիւնը եւ Պետտերու-
թալթութիւնը: Օնիկեան, Անտու-
նեան բարձրութիւնը:

Ան ամենը կը կազմէին որուն ար
գահանդէսին ամբողջութիւնը, որոնք
մեծ ոգեւորութիւն առաջ բերին ու
ձախճարութիւններ խնդրին: Ան ա-
մենէն ետքը՝ Երզնկայի-թատերական
խումբը երգեց «Կախազան»-Անտոյ
Եւ Օնիկի նուիրում — սպասորու-
թիւնը որ կը թողու «Կախազան»
կարելի չէ բացատրել, որոշումն
ձախճարութիւնները սրածը լէցո-
ցին եւ երկրորդ անգամ պահանջու-
ցին:

«Կախազան»էն ետք ներկայացուե-
ցաւ Երկու կենդանի պատկեր—
Անտոյնը կը ներկայացուէր չորս
հերոսները՝ բանտին մէջ, վիրաւոր,
որոնց վրայ ազատութեան, յեղափո-
խութեան ոգին կանաչ պտակ մը
բռնած էր:

Երկրորդը կը ներկայացնէր հե-
րոսներուն կախազան առաջնորդու-
իւր: Պետոյն նշանաւոր խօսքը — Վ.Ս.
ՂԱՓԱՐՆ ԶԻՒՆՈՒՄԻՐ — որ մեծ տու-
նեղով կրօնած էր: Եւ որ յայտ կու-
տար խորախաղաղ պատմութեան ու
գին կրկին պատկեր ձեռքը բռնած:
Իսկ թուրք ստեղծանքը սանձկամ
ապշած մնացին էին:

Կենդանի պատկերներուն թուո-
ցած տպաստութիւնն այ յուզիչ էր:

Փողոցները ցրտեցու յուզում
բայց գոհունակ:

Սգահանդէսը իր ճիշտ յայտագրին
եւ մասնատրուակէս ամենքուն սրտին
մօտ նստատակին համար, կընդար-
մը աւելի համաւտ մուտքով տեղի ու-
նենալ, Եթէ երկու օր առաջ արդէն
թատերաւորը թատրոն մը առած չըլ-
լար բարեկամական հաստատութեան
մը համար, դուռ հասցի՞ 180 ԼՖՓ
40 սանթիմ է:

Հանդէսին յաջողութիւնը իր բա-
րոյական յայթանակովը ուժով ու
փառասիրտ սպասի մը եկաւ իջնցնել
այն ամեն յատկու ազատ երեսին,
որոնք, կամչնամ բուրու, այնպէս
կերտար որ առ անգամ ալ ուզեր են
խանդարել, բայց իրենց նկատած ցե-
խը փոխանակ պատին վրայ կաշկու-
րենց երեսին վրայ փակաւ — մեր
թուրք վատերուն:

Հրանդ-Ժ' Բայր

Ֆիլիպէ

ՄԵԾ ՊԱՎԱՍՏԻԹԻՒՆ ՍԸ

Քրտասահմանի մէջ ահագին
թիւով հայ թերթեր ու հանդէս-
ներ ունինք: Գեո. ամեն օր նո-
րերն ալ երեւան կուգան, և կար-
ձատեւ գոյութենէ յետոյ մեռնող-
ներուն նախը կը յաջորդեն:
Յամենայն դէպս մեր պարբերա-
կան հրատարակութիւններու թի-
ւը այնչափ ակնածելի է, որ ատկէ
աւելին ունենալու պէտքն ալ չի
կայ:

Բայց այդ մամուլը մեծ, շատ
խոշոր և աչքի զարնող պակա-
տութիւն մը ունի. ան շատ քիչ
կը տարբերի բաւութեան ասկ
լոյս տեսնող մամուլէն և չի կըր-
նար այն օգտակարութիւնը ունե-
նալ, զոր իրատուութիւնը սպա-
սելու ազատ արտասահմանի և զի-
տութեան վառան կեդրոննե-
րու մէջ հրատարակուող մամու-
լէ մը:

Մտոր պատճառը գրեթէ ինչ
է. ան օր, ամեն մէկ սպուած
քուրջ ահագին գովասանքներով
կընդունուի. ամեն մէկ անպէտք
թղթի կոյտի մը համար փառա-
ւոր գործունէութիւն, օգտակա-
րութիւն կը գուշակուի:

Եթէ մեր լուրջ համարում
հանդէսներու մէջ եղած մամու-
լի տեսութիւնները կարգաւ րն-
թեցող, պիտոյ այս եզրակացու-
թեան յանգիս թէ, արտասահման
հրատարակուող ամեն թերթերը
և հանդէսները փափուգելի բարձ-
րութեան հասած են, եւ կարող
մեր գիտութեան ծարաւ ժողո-
վորդին ամեն խաւերուէ բաւա-
րարութիւն տալու:

Սակայն իրականութիւնը այդ-
պէս չէ. մեր արտասահմանի հան-
դէսներուն և թերթերուն մեծա-
մասնութիւնը անպոչ, անզուխ
հրատարակութիւններ են: Ոչ
միայն օգուտ մը չեն կրնար բե-
րել մեր հասարակութեան, այլև
չատանգամ փառակար կըլլան:
Ու ատոր միակ պատճառը անկեղծ
անշահախնդիր քննադատութեան
պակասն է. ոչ ոք չի ուզեր գը-
լուխը ցուցնել ու քննադատել.
ոչ ոք չի ուզեր աղէկն ու գէշը
որոշել, աղէկը քաջախիբի, գէ-
շը անպէտքը հարուածել: Այդ
ուղղութեամբ կերթան մեր յի-
տուն տարուն գոյութիւն ունեցող
հրատարակութիւնները, նոյն
ուղղութեամբ կերթան և ըստ ե-
րևոյթի կուրսէ, ճշմարիտ դա-
տի մը համար թշնամի ճարելէ
չը վախճողները:

Ու եթէ այս այսպէս շարունա-
կուի, արտասահմանի հայ մա-
մուլը երբէք իր փափուգելի
բարձրութեանը չը պիտի հասնի:
Եւ խմբագիրներն իսկ, որոնք
լայն նպատակներով ճամբա ելած
են, պիտի ենթարկուին տիրոջ
ընդհանուր հոսանքին, որ փոխա-
նակ կեանք վերածնելու, զար-
թնում առաջ բերելու, ամեն բան
կը մեռցնէ:

Թող քննադատութիւնը մամու-
լի անաչառ քննադատութիւնը
տիրապետող հանդիսանայ. թո՛ղ
ան նոյն իսկ կատարի ըլլայ, և
այն մամանակ կարելի է որ մենք
քիչ հրատարակութիւններ ունե-
նանք. բայց օգտակարը ունե-
նանք:

Այն ժամանակ միայն կարելի
է յուսալ որ արժէք ունեցող հը-
րատարակութիւնները պիտի քա-
ջալերուին, իսկ անարժէքները
պիտի մէջ տեղէն վերնան:

ՆԵՐՈՒՊՈՍԻ ՆԱՅ ՈՒՍԱՆՈՂԱԿԱՆ ՄԻՈՒԹԻՒՆ

(Շրջա, կրակակ — նախա)

Ընկերներ:

Կարգագիր՝ յանձնաժողովը
յայտարարում է ի գիտութիւն
երկրային Հայ Սոցիալական Մի-
ութեան բոլոր անդամահիներին
և անդամներին, որ 1902 թ.ի Հա-
մադամարը կը բացի ժրնէում
Չատկի աստերին, այն է մարտի
31 թն, երկուշաբթի օր, և կը
տեսի մի շաբաթ:

Համաձայն մեր կանոնագրու-
թեան 10րդ, յօդուածի՝ խնդրում
ենք սուսանդական տեղական
մարմիններին՝ ձեռնարկել պատ-
գամատրներին րնարութեան և
րնարածներին անունները տեղա-
կացնել մեզ՝ յուսակի մէջ մտցնե-
լու համար:

Գատարանութիւն կարգալցան-
կացողները թող բարեհաճեն ի-
րենց որոշման և րնարած նիւթի
մասին հարգողի կարգագիր
յանձնաժողովին ոչ աւելի ուշ
քան փետրվարի 25ը, որպէսզի
կարող լինենք վաղօրօք պատ-
րաստել Համագումարի ծրագիրը:

Հրուիրում ենք տեղական
մարմիններին՝ յատուկ ժողով
գումարել և պատրաստել այն բո-
լոր առաջարկները, որ
կուղենային ենթարկել Համագու-
մարի քննութեան, տեղեկագրե-
լով այդ մասին մեզ՝ նոյնպէս ոչ
աւելի ուշ քան փետրվարի 25ը,
ժրնէում մտքա ամենին կը
կազմուի յատուկ մասնաժողով
եկող ընդերներին ընդունելու և
զիւրիութիւններ տալու համար:

Ընկերական բարեւեներով,
Կարգալի Եանձնաժողով
1902 1 փետրուար
ժրնէով

Հասցէ՝ Ունեւե ճե Զեյիդիյում
Արեւելեան թր շէտօր, Վի թր շէտօր
թր շիւի. 2 ժրնէով:

ՆԻՐԱՒՈՒՆԸ՝ Ի ԽՍԲԱԳՐԻՆ

—(II)—

«Պրտուներ»-ի անցեալ թիւին
մէջ 81 անձերէ ստորագրուած
հանրագրութեան մը պատճէնը
կար, Լեւոն Սարգիսեանին գար-
ցնէն գուրս ձգուելուն համար. ու-
րուն մէջ ես ալ ստորագրած եմ:

Բայց իմ ստորագրած հանրա-
գրութեանս վրայ խորհրդաւոր
ձեռքի նշանը չկար:

Ինչպէս որ հանրագրութիւնը
պատրաստողներն ալ նոյնը կը
պնդեն. այդ ձեռքը խմբագիրը
իւր կողմէն աւելցնելով, ըսել
կուզէ:

Արդեօք ինչո՞ւ զիս մոռցար.
Ես փէօն թիւրք եղած եմ.
Ես «Հուզուց» հրատարակած եմ
Ես Հ. Նէֆթի գրած եմ անունս.
Ես ուրացած եմ իմ ազգութիւնս:

Ես փէօն թիւրք եղած եմ 50 ֆրանք
կաշառք կեյրս ծ եմ:

Ես Հուզուցիս մէջ միւսանդ
թիւրք մը եղած եմ:

Ես հէրսաներուն հասցէին հայ-
հայիչ եմ:

Ես Հուզուցիս Սուլթանին ա-
ղբուած եմ:

Սուրեն ինչո՞ւ զիս ալ խմբագիր
ըլլալէ գողցեցնելու չէք աշխա-
տիր: Եթէ այդպէս ըսել կուզէ,
զինքը կապահովցնե՞մ որ շատ
հեռու չէ այդ օրը, արդէն ա-
ռաջին օրինակը նումլացիք
տուին:

Մտքս և Ե. Սայիկեան
Վառնա

ՀՐԱՒԵՐ

Թուժ մը Գաշնակցական և
Հնչակեան պարտներ ինձ դիմե-
ցին իբրեւ Գաշնակցականի մը Հ.
Յ. Գաշնակցութեան դէպի միւս-
թեանականները անտարբեր վե-
րաբերութիւն համար բացատրու-
թիւն պահանջելով, և ես որչափ
օր փաստեցի, անոնք գարձեալ
վրաս պարտակաւութիւն դրին
որպէսզի հրուիրեմ միութեանս
կան մէկը որ իրենց պահանջին
գոհացում կարենան ստանալ:

Եւ չընայելով որ ես կուսակցա-
կան մարդ եմ, կ'առաջարկեմ
այնուամենայնի «Փաղովդրային»
հայկական և այլ միութեանց
յանձնաժողովներուն որ իրենց
կողմէն պատգամաւոր մը նշա-
նակեն որոշեալ օր մը «Բար-
կէն Սիւնի» ընթերցարանին
մէջ միութեան առթիւ իրենց
հայեցակէտերը պարզելու:

Մտքս երանանակ
Վառնա, 5 մարտ

ԱԶԳԱՑԻՆ ՔՐՈՆԻԿ

Երուսաղէմայ լուսարար պետ
Սահակ եպիսկոպոս Խաչայեան
կիւրիկիոյ կաթողիկոսական ըն-
ութեան պատմութիւնը գրելու
ձեռնարկած է. հայ մէկեւնասի
մը խնդրանքով, որ պատրաս-
տակաւութիւն յայտնած է տպա-
գրական ծախքը վճարելու հա-
մար:

— Կովկասէն կրկին 800 բուպ-
լի գրկուեր է Պարիսարքարուն ի
նպաստ կարնոյ արկածելոց:

— Սանասարեան վարժարանը
կարիւնէն Խարբերդի Սորսոր
վանքը տեղափոխելու մտադրու-
թիւնը ընդունուած և կարգադ-
րուած է. միայն ոչ ժամ եղեանցի
հաւանութիւնը կապատուի, որուն
այդ մասին արդէն գրած են:

— Պոլսոյ թերթերը կը հա-
ղարդեն որ Վիլնիայի Միութար-
եան վանքի արքայապետ Արսէն
Սայիկեան հրատարած է վանհայ-
րութեան պաշտօնէն, միայն

պատուաւոր վանահայրութեան տիտղոսը չլրան պահելով:

Ատով կը կարծուի թէ վերջած է վերջերս այդ վանքին մէջ հր- ներու և նորերու մէջ տեղի ունեցած վէճերը. յաղթանակը նորերը կը տանին:

— Պատրիարքարանէն դարձեալ ներքը զրկուած մասնաւոր շրջա- բերականներով դասաւանդու- թեանց մէջ յապաւումներ ընել հրամայած ըլլալով անօրէնու- թիւններ ձեռք առնուած են:

Ինչպէս կերելի Պատրիարքի և Սուլթանի միջեւ վերջերս տեղի ունեցած շնչին ընդհարումները այդ հետեւանքն ունեցան:

— Կարնոյ մէջ փետրուար 25ին կրկին երկրաշարժի ինթիւն ցն- ցումներ զգացուեցին: Վրաննե- րու մէջ պատասպարուածները սար- սափելով գուրս փախեր են. բայց ոչ ոք չէ փաստեր:

Բ Ա Ց Ա Տ Ր Ո Ւ Թ Ի Ի Ն

— 0 —

Հրանդ—Ժիրայրի «Ազգային ցեցեր» վերնագրով յօդուածին մէջ յիշուած Տէր Սարգիսներուն մէջ Վարնայի Պարգիւս քահանայ Վարպեանը չի ակնարկուիր:

Ա Ր Տ Ա Ք Ի Ն Լ Ո Ւ Ե Ր

Թ Ո Ւ Բ Ք Ի Ա

«Պէրլինէր Թակէպլաթ» թեր- թին Պոլսէն կը հազորդեն հե- տեւեալը:

14 օրուան մէջ 146 սպաներ ձերբակալուեցին, որոնց մէջ կան 5 զօրաբաժնի հրամանատար ներ: Պատերազմական նախարա- րի մէջ նոր հրամանը սպանե- րուն կարգիլէ եւրոպական քրիւպ ներ յաճախել:

Բարձրատիճան սպայ մը յայ- տարարեր է թղթակցին որ—եթէ այսպէս շարունակուի ոչ մէկ կա- րող սպայ մը պիտի մնայ պաշտօ- նի մէջ: Ամենասոսկալի հալածան քի կենթարկուած են եւրոպա կը թուած սպաները:

— «Էնֆօրմատիօն» թերթը կը հազորդէ որ Ալպանիոյ մէջ յու- զումը շատ մեծ է: Սուլթանի և թուրք իշխանութիւն զէմ գըր- ուած բազմաթիւ պրօչուրներ սա- րածուած են:

— Աւազակապետ Տիւթթէօ 9 թուրք սպայ գերելով. կախեր է զանոնք. վերջը կտրտեր և կը- տորանքները զրկեր է թուրք իշխանութիւններուն յայտարար- րելով: Պահա այսպէս պիտի վա- ըուինք ամեն բունուորներու և մեր պետը սպանողներու հետ:

— Հետզհետէ լուրերը կը տա- րածուին որ Պօրիս Սարաֆովը Մակեդոնիոյ մէջ կը գտնուի ու ապստամբութիւն կը պատրաստէ: Թուրք կառավարութիւնը բազմա- թիւ լրտեսներ զրկած է Պուլկա-

րիս, այդ մասին տեղեկութիւն- ներ քաղելու համար:

— Սուլթանը Օսման փաշա Պէ- տրիսանի մահուան վճիռը մշտա- կան բանտարկութեան փոխեր է: Շուտով պիտի սենսուի Ֆուատ փաշայի հետ ձերբակալուած 14 հոգիներու դատը:

— Քանի մը արար շէխեր թա- րապուլուէն թուեալ փախած են և այն տեղէն հեռագրով Սուլթա- նին բողոքած են Մարսպուլի թուրք իշխանութեանց դէմ:

Պ Ո Ւ Լ Ե Ա Ր Ի Ա

Մարքաներուն խնդիրով զբա- ղող հարցաքննիչ գաստաւորը իր պաշտօնին վերաբերեալ զօրքերը կատարած է և մեղադրեալները գաստարանին պիտի լանձնէ:

Կը կարծուի թէ՛ ազգային ժո- ղովը ապրիլի մէջ, Չառնէն յե- տոյ պիտի բացուի:

— Ցանքովիստներու օսկանը «Պուլկարիս» թերթը կը յայտա- բարէ որ կառավարութիւնը 100է աւելի ձայն ունի. 15-20 ձայնով աւելի է միւս բոլոր հակառակա- րականներէն:

Թ Ո Ւ Ս Ի Ա

Վարչապա քաղաքին մէջ սպա- յակոյտի գնդապետ մը ձերբա- կալուեց է երեք տարի շարունակ պատերազմական գաղտնիքներ Գերմանիոյ կառավարութեան յայտնած ըլլալուն համար:

Գնդապետը ծագումով Գերմա- նացի է Կրիմ մականունով. անոր մեղսակից են և երկու կարեւոր տիկիներն:

— Թօլթօլի առողջական վի- ճակը կրկին գէշցեր է:

— Երկու հարիւր ուսու ձէնէ- րայներ հաւանութիւն տուած են ներկայ ըլլալու Ալէքսանտր Բ. Չարին Պուլկարիոյ մէջ կանգնե- լիք արձանի շանդէտին:

Ամէն օր զիշերները Բեթերս- պուրկի մէջ խուզարկութիւններ կը ըլլան և շատ մը անձեր կը ձեր- քակալուին:

— Լիպլին քաղաքին ժիմա- ղին աշակերտները մերժած են ի պատիւ Չարին Ռուսերէն օրհ- ներգ երգել:

Այդ առթիւ խուզարկութիւն- ներ տեղի ունեցեր են ու հաս- կցուեց է որ աշակերտներէն շա- տերը հակառուսական գողտնի ընկերութեան անդամներ են:

Յ Ր Ա Ն Ս Ա

Հիմա ալ Յրանսան կը պատ- րաստուի նշանաւոր փիլիսոփայ Օկիւստ Քօնթի հարիւրամեակը տօնել:

Թ Ր Ա Ն Ս Վ Ա Լ

Պօէրները Լօրա Մէթուէնը, որ վերջին օրերս գերի բռնած էին, ազատ արձակած են: Անգլիական կառավարութեան կը սպասուի որ ինք ալ պոէր Գրիլիթի զէնքը զօ- րավարը ազատ արձակէ:

Պօէրները Լօրա Մէթուէնի հետ շատ ազնուաբար վարուեց ր են:

Չ Ի Ն Ս Ս Ս Ա Ն

Չին կառավարութիւնը եւրօ- պական պետութիւններէն հար- ցուցած է թէ՛ Ե՞րբ պիտի Թիէն- ձինը ազատի եւրոպական զօրքե- րէն:

Պետութիւնները զանազան պատճառներով կը յետաձգեն զօրքերու մէկնումը, աւելի ի- րարմէ վտանալու պատճառով:

— Կառավարութիւնը զաշնա- կից պետութիւններուն տուգան- քին փետրուարին վճարելիք մա- սը վճարեր է, թէ Չինսպինները և թէ օտար դեսպաններ շատ զօհ են այդ պատճառով:

Թ Ա Տ Ր Ո Ն Ս Ա Ն Դ Ր Ա Լ

Յառաջիկայ շաբաթ գիշեր ժամը 9ին թատերասէր երիտասարդաց կող- մէ. ի նպատակին Պաճառ Փա- սուլեաճեանի, պիտի ներկայացուի:

Յ Ո Ւ Գ Ի Գ

Կ Ա Ս

Սէ՛ ԿՐՕՆԻՑ ԵՒ ՀԱՅՐԵՆԵԱՑ
ողբերգութիւնը, տաճկերէն լեզուա- կեղինակութիւն հոշակաւոր Ռուսիսիի 5 արարուած:

Հ Ա Յ Ե Ր Ի Տ Ս Ս Ա Ր Դ Ո Ւ Թ Ի Ի Ն

Կ Օ Շ Ի Կ Ի Վ Ա Ճ Ա Ռ Ա Տ Ո Ւ Ն

— 0 —

Հայրապետ Սարգսեան «Բէրեւոյալ» կապ մեծ պօրտախին վրայ:

Ամենաընտիր ապրանքէ պատրաս- տի եւ մասնաւոր պատէրով կօշիկ- ներ, դները չափաւոր. վստահ ենք թէ յաճախողները գոհ պիտի մնան ամեն կերպ:

Վառնա

2

Կ Ա Ր Ե Ն Ո Ր Ա Չ Ի

— 0 —

Ով որ կը փափագի սենեկին գե- ղեցիկ եւ արժանավայել զարդ մը ա- լելցնել, թող բարեհաճի զրկել մեր հասցէին 2,50 Ֆրանկ, 1 բուրձի կամ 50 սէնթ, փոխարէն՝ ապահովագրեալ ծրարով. կընդունի Հայոց սիրելի ՆԱՀԱՊԻՏԻ Հ. ԱԼԻՇԱՆԻ մեծագիր լուսատիպ պատկերն, յատուկ խնամ- քով սպուած 50էն 65 հարիւրամետր մեծութեամբ փայլուն եւ ստուար թուղթի վրայ: Գործակալաց եւ մե- ծաքանակ գնողաց իւրաքանչիւր տա- սը օրինակաց վրայ մէկ օրինակ ձրի կը զրկուի:

Դրաւըր կանխիկ

ՍԻՄՕՆ ՆԱՀԱՊԵՏ ԵՒ ԸՆԿ.

Ս. Ժիօզ. Գրիգորյան 5715

(Իտալիա) Վէնէտիկ

Դրաւըր.— Կը փութանք յայտնելու ազնիւ ազգայնոց որ ի մօտոյ պիտի հրատարակենք նաեւ սեծագիր լու- սատիպ, առաջնակարգ եւ ամենահե- սաքքրական պատկեր մը. որ կը ներկայացնէ հոշակաւոր ազգային գործիչներու ժողով մը: Նոյն պատկերին լուսատիպ քա- տերն եւս կը պատրաստենք:

Ն Ո Ւ Ա Յ Ո Վ Ե Ր Գ Ե Ր

Ֆիլիպպէի Հայկ. Երգեցիկ խում- րը պատրաստ ունի հետեւեալ քառաձայն երգերը:

«Մեր Հայրենիք», «Մայր Ա- րարիկ» և «Զիւլալիսին Ֆաթէն կիրամ», «Լոսեց ամպերը», (Կա- րա Մուրզա), «Ո՛ր մարտ—բաւ թէ որ բան», «Վրէժ—թող կորնչին», մէկուկան երես 15 սանթիմ:

«Արիք Հայկազունք», «Ես լր- սեցի մի անուշ ձայն», և «Օյնա- զան»—ժողովրդական պարերգ— (Կարա Մուրզա) երկու քական ե- րես 30 սանթիմ:

«Ռազմերգ — Հայ եղբայրները» 3 երես 45 սանթիմ:

«Ինչպէք տեսէք ո՞վ է կերել զէժ» և «Անփօ լէ լէ»—ժողովր- ղական պարերգ—(Կարա Մուրզա) «Պախալան»—բերին աթոռ ելաւ 4ական րբս 60ական սանթիմ:

Արտասահմանի համար մէկ ժ- րեսը 20 սանթիմ:

Ֆիլիպպէ Հայկ. Երգ.—բասմ. Խումը Հասցէ

Յակոբ Արվածեան (Ֆիլիպպոյ)

Գ Ո Ւ Թ Ա Ն

Հանդես արևելայ, հողագործակա- ղիսակաւ եւ արուեստագիտակաւ

Հիմնադիր տնօրէն

Գարեգին Ը. Մեծաստեղեան

Հրատարակուած է Ը.րգ թիւը, շահեկան բովանդակութեամբ:

Տարեկան բաժնեգիրն 12 Ֆր. դի- մել հիմնադրին, 23 rue de la Oeuvre, 11

L'EUROPEEN

— 0 —

Շաբաթաթերթ քաղաքական, մի- ջազգային իրաւունքի, ընկերակա- ն հարցերու, գրական եւ գեղարուես- տական:

Տարեկան 15 Ֆր.

Վեցամսեայ 8 Ֆր.

Հասցէ 24 rue Dauphine Paris VI

Отговорникъ :

Мурадъ-Ераносянъ

Печ. Взаимность — Варна